ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՐԴԵՆԻՍԻ ՇՈՒՐՋՕՐՅԱ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

«05» «03» 2026թ.

Լայմիս ՍՊԸ-ի տնօրեն
Սերգեյ Հովհաննիսյանին
(Հասցե՝ ք.Երևան, Մարգարյան 20/2)
(էլ. փոստ՝ Hovhannisyan.seriog@mail.ru)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Ն ԱՍՀՆ-ՎՇՄԽԿՊ-ԳՀԱՊՁԲ-26/01-Շ-Լ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ գործընկեր,

«Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի և Լայմիս ՍՊԸ-ի միջև 2026 թվականի հունվարի 26-ին կնքվել է «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար շինանյութի մատակարարման Ն «ԱՍՀՆ-ՎՇՄԽԿՊ-ԳՀԱՊՁԲ-26/01-Շ-Լ» պայմանագիրը, որի 1.1 կետի համաձայն վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Ն 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով և մատակարարման ժամանակացույցով նախատեսված ապրանք (Դռան փական):

Լայմիս ՍՊԸ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 (հինգ) օրից ավելի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լայմիս ՍՊԸ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունը՝ գնորդը միակողմանի լուծում է պայմանագիրը, այն համարում է լուծված **248400 /երկու հարյուր քառասունութ հազար չորս հարյուր/** ՀՀ դրամ չափով՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի Ն 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով կամ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով՝ Լայմիս ՍՊԸ-ին տրվում է 10 (տասը) օր տուժանքով սահմանված պայմանագրի ապահովման 28000 /քսանութ հազար/ ՀՀ դրամ և որակավորման ապահովման 42000 /քառասուներկու հազար/ ՀՀ դրամ գումարները շահառուի 900158000027 հաշվի համարին փոխանցելու նպատակով: Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում, հիմնվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի վրա, Պատվիրատուն Լայմիս ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը կներկայացնի լիազոր մարմին:

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ Ա. ԵՐՎԱՆԴՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն ք. Վարդենիս, Զորավար Անդրանիկի 4, նրբ 1

(269) 2-27-21

vardenisinternat@mail.ru